

277

8
J - 39

49-8
36

Ա. Ա. ԺԴԱՆՈՎ

ԽՈՐՅՐԴԱՅԻՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՇԽԱՐՀԻՍ ԱՄԵՆԱԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ
ԶԵՎ ԱՄԵՆԱԱՌԱՋԱՎՈՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

320 | 193

Պատմություններ կրօսով և առաջնական գործություններ
ՏԵՐԵՎԱՆ • 1935

Հ ա ր մ .
Հ 1-238ա

13 MAY 2005
2 NOV 2009

8

Ժ - 39 Ա. Ա. ԺԴԱՆՈՎ

Խ Ո Ր Հ Ր Դ Ա Յ Ի Ն

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն
Ա Շ Խ Ա Ր Ձ Ի Ս Ա Մ Ե Ն Ա Գ Ա Ղ Ա Փ Ա Ր Ա Կ Ա Ն
Յ Ե Վ Ա Մ Ե Ն Ա Ա Ռ Ա Զ Ա Վ Ո Ր
Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ե

(Ճառ Խորհրդային գրադարձի առաջին
Համամիուրենական համագումարում)



5633
Պ ե տ ս ւ ե ւ ո ւ շ ա բ ա ր ս ւ ե ւ ո ւ թ ա բ ո ւ ն
Յ ե ր ե կ ա ն զ 1935

25 APR 2013

277

Տեխ. Խմբ՝ Տ. Խաչիլանեյան
Արքագրի՝ Հ. Դոլուխամյան

Դշավկետ 264 Պատկեր 970
Հրատ. 3406 Տիրաժ 1000
Գետհրատի տպարան



Ընկերներ, բոլցելի կների Համարութենական Կոմունիստական Կուսակցության կենտրոնական Կոմիտեյի և Խորհրդագյին Սոցիալիստական Հանրապետությունների Միության Ժողովրդական Կոմիտարանների Խորհրդի կողմէց թույլ տվեք բոլցելի կան բոցավառ վողջույն հղել խորհրդագյին գրողների առաջին համադումարին, և իդեմս նրան՝ մեր Խորհրդագյին Միության բոլոր գրողներին՝ գլխավորությամբ պրոլետարական մեծագույն գրող Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորեկու (բուռն ծափեր) :

Ընկերներ, մեր համադումարը հավաքվում եւ այնպիսի պայմաններում, յերբ սոցիալիստական շինարարության ճանապարհին կանգնած հիմնական դժվարությունները մենք արդեն հաղթահարել ենք, յերբ մեր

4865-87

յերկիրն ավարտել և սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը, վորը կապված և ինդուստրացման և խորհանությունների ու կոլտանատեսությունների շինարարության քաղաքականության հաղթանակի հետ:

Զեր համագումարը հավաքվում և այն ժամանակաշրջանում, յերբ կոմունիստական կուսակցության զեկավարությամբ և մեր մեծ առաջնորդությամբ (քուննափեղը) մեր յերկրում վերջնականացն հաղթանակեց սոցիալիստական տնտեսաձեւը: Հետեւ զեր համագումարին, ընթանալով մի ետապից մյուսը, հաղթանակից հաղթանակ, քաղաքացիական պատերազմից կրակությունը վերականգնման շրջանը, վերականգնման շրջանից ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման ընթանը, մեր կուսակցությունը յերկիրը տարապետեսլի հաղթանակ կապտավաստական տարրերի վրա, դուրս մղելով նրանց ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերից:

ԽՍՀՄ-ն դարձավ առաջավոր, ինդուստրիալ և աշխարհիս ամենախոչըր սոցիալիստական հողագործության յերկիր: ԽՍՀՄ-ն դարձավ առաջավոր սոցիալիստական կուլտուրայի յերկիր, վորում փարթամորեն ծաղկում, զարգանում և աճում եմ եր խորհրդային կուլտուրան:

Շնորհիվ սոցիալիստական տնտեսաձեւի հաղթանակին, մեր յերկրում իրականացված և մակարույժ դասակարգերի լիկվիդացիան, գործադրյության ու պատուիերիզացիայի վերացումը դյուզում և վորչըրի վերացումը քաղաքում: Փոխվեց Խորհրդային յերկրի ամբողջ կերպարանը: Արմատապես փոխվեց մարդկանց գիտակցությունը: Մեր մոտ «անվանի մարդիկ» դարձան սոցիալիզմի կատացողները՝ բանվորներն ու կուլտնտեսականները:

Մեր յերկրում սոցիալիզմի տարած հաղթանակների ամենատերտ կապակցությամբ ամբանդվում և Խորհրդային Սիության արտաքին ու ներքին գրությունը, աճում են նրա միջազգային կշիռն ու հեղինակությունը, մեծանում են նրա, վորպես հա-

Հաշխարհալին պրոլետարիատի հար-
վածային բրիգադայի, վորսես վե-
րահսա համաշխարհային պրոլետա-
րական հեղափոխության հզոր պատ-
վարի, նշանակությունը :

Ընկ. ՍՏԱԼԻՆԸ կուսակցության
17-րդ համագումարում տվեց մեր
հաղթանակների չգերազանցված հան
ճարեղ վերլուծումն ու նրանց սայ-
մանները, մեր դրությունը ներկա-
յումս և անդաստակարդ սոցիալիստա-
կան հասարակության կառուցումն
ավարտելու հետագա աշխատանքի
ծրագրիրս : Ընկ. ՍՏԱԼԻՆԸ տվեց մեր
աշխատանքի հետ մնացող ճակա-
ռամասերի և դժվարությունների
վերլուծումը, դժվարություններ,
վորոնց հաղթանակի համար աննը-
կուն, որեցոր սպայքար և մղում մեր
կուսակցությունը և նրա զեկավա-
րությամբ՝ բանվոր գասակարդի ու
կուտակության դյուզացիության մի-
լիոնարվոր մասսաները :

Մեզ անհրաժեշտ ե ինչ գնով ել լի-
նի հաղթահարել հետամնացությու-
նը ժողովրդական տնտեսության և
այնպիսի կարեռագույն ճյուղերում՝
ինչպիսին և յերկաթուղային ու ջրա-

յին արանսպուրտը, ապրանքաշրջա-
նառությունը և գունավոր մետաղա-
ձուլումը : Մենք պետք ե աշխատենք
ծալալել զարգացնելու անասնաբու-
ծությունը, մեր սոցիալիստական
գյուղատնտեսության այդ կարեվորա
գույն ճյուղերից մեկը :

Ընկ. ՍՏԱԼԻՆԸ մինչև վերջը յե-
րեվան հանեց մեր դժվարություննե-
րի ու թերությունների արմատները:
Նրանք բղխում են նրանից, վոր մեր
կազմակերպչական-գործնական աշ-
խատանքը հետ և մնում կուսակցու-
թյան քաղաքական դժի պահանջնե-
րից և յերկրորդ հնդամյակի իրակա-
նացումով առաջադրվող պահանջնե-
րից : Աչա թե ինչու կուսակցության
17-րդ համագումարի կողմից ամրող
հասակով ինդիքտ է դրված մեր կազ-
մակերպչական աշխատանքը բարձրա-
ցնել այն քաղաքական մեծադղույն
խնդիրների մակարդակին, վորոնք
դրված են մեր առաջ: Կուսակցու-
թյունը, թիկ. ՍՏԱԼԻՆԻ առաջնոր-
դությամբ կազմակերպում և պայ-
քարի յէ հանում մասսաներին՝ կա-
պիտալիստական տարրերը վերջնա-
գանապես վերացնելու համար, եկո-

նոմիկայում և մարդկանց գիտակցության մեջ կապիտալիզմի մոռացորդները հաղթահարելու, ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցումն ավարտելու համար։ Մարդկանց գիտակցության մեջ կապիտալիզմի մնացորդների հաղթահարումը նշանակում է պայքար՝ բուժուական աղղեցությունների ամեն տեսակի մնացորդների դեմ պրոլետարիատի վրա, պայքար թափթփվածության, ցրվածության, լուղբության, մանր-բուրժուական սանձարձակության դեմ, ինդիվիդուալիզմի դեմ, հանրային սեփականությանը ցուցաբերվող գրափական ու անբարեխիզմ վերաբերմունքի դեմ։

Մենք ունենք մեր ձեռքում, մեր ճանապարհին ծառացած բոլոր դժվարությունները հաղթահարելու վստահելի զենք։ Այդ զենքը՝ ՄԱՐՔՍԻ, ԵՆԴԵԼՍԻ, ԼԵՆԻՆԻ և ՍՏԱԼԻՆԻ անպարտելի ուսմունքն ե, վորը կենսագործում են կյանքում մեր կուսակցությունը և խորհուրդները։

ՄԱՐՔՍԻ, ԵՆԴԵԼՍԻ, ԼԵՆԻՆԻ և ՍՏԱԼԻՆԻ մեծ դրոշը հաղթանակ տարակ։ Հենց այդ դրոշակի հաղթանա-

կին մենք պարտական ենք նրանով, որ այստեղ հավաքվել ե խորհրդացին գործների առաջին համագումարը։ Յեթև այդ հաղթանակը չինք էնթի մեղնից, բոլեկիկիներից, վոչ վոք չի հավաքի այսպիսի համագումար (ծափել)։

Խորհրդային գրականության հաջողությունները պայմանավորված են սոցիալստական շինարարության հաջողություններով։ Նրա աճումը արտահայտում է մեր սոցիալիստական իրավակարգի հաջողություններն ու նվաճումները։ Մեր գրականությունն ամենայերկուսարդ գրականությունն ե բոլոր ժողովուրդների ու յերկրների գրականությունից։ Միենույն ժամանակ նա ամենազաղախարական, ամենաառաջավոր և ամենահեղափոխական գրականությունն ե։ Զիա և յերբեք չի յեղել մի գրականություն, բացի խորհրդային գրականությունից, վորը պայքարի կաղմակերպեր աշխատավորներին ու ճնշվածներին վերջնականապես վոչնչացնելու ամեն տեսակի շահագործումն ու վարձուատրկության լուծը։

Զկա և յերբեք չի յեղել այնպիսի
 դրականություն, վորն իւ յերկի թե-
 մատեկայի հիմքն ե դարձնում բան-
 վոր դասակարգի ու դյուզացիության
 կյանքը և նրանց պայքարը, սոցիա-
 լիզմի համար: Վոչ մի տեղ, աշխար-
 հիս վոչ մի յերկրում, չկա մի դրա-
 կանություն, վորը պաշտպանի բո-
 լոր ազգերի աշխատավորների իրա-
 վահաճառարությունը, պաշտպանի
 կանանց իրավահաճառարությունը:
 Բուրժուական յերկրում չկա և չի
 կարող լինել այնպիսի գրականու-
 թյուն, վորը հետեւզականորեն ջախ-
 ջախի ամեն մի խավարամտություն,
 ամեն մի միստեկա, ամեն տեսակի
 կղերականություն, սատանեյություն,
 ինչպես այդ անում և մեր գրականու-
 թյունը:

Այդպիսի ստացալոր, գաղափա-
 րային ու հեղափոխական գրականու-
 թյան կարող ե դառնալ և իրոք դար-
 ձել ե միմիայն խորհրդային գրակա-
 նությունը, վորը մեր սոցիալիստա-
 կան շինարարության միս ու արյու-
 նից ե: (ծափեր):

Խորհրդային գրականագետները ըս-
 տեցել են արդեն բարգականաշատի

տաղանդավոր յերկեր, վորոնք ճիշտ
 ու ճշմարտորեն արտացոլում են մեր
 խորհրդային յերկրի կյանքը: Արդեն
 կան մի շարք անուններ, վորոնցով
 մենք իրավունք ունենք պարձենալու:
 Կուսակցության զեկավարությամբ,
 կենտրոնի զգայուն և ամենորյա զե-
 կավարությամբ, ընկ. Ստալինի ան-
 դուլ ոժանդակությամբ և ոզնու-
 թյամբ, Խորհրդային իշխանության
 և կուսակցության շուրջը համախմբ-
 վել ե խորհրդային գրականագետնե-
 րի ամբողջ մասսան: Յեզ ահա մեր
 խորհրդային գրականության հաջողու-
 թյունների լույսի տակ ավելի շատ և
 ավելի ցայտուն կերպով բացվում ե
 այն ամբողջ գրաւթյունը, վոր գոյու-
 թյուն ունի մեր իրավակարգի, հաղ-
 թանակած սոցիալիզմի իրավակարգի
 և մեռնող, նեխուն կապիտալիզմի
 իրավակարգի միջեւի:

Ինչի՞ մասին կարող ե գրել, ինչի՞
 մասին յերազել, ի՞նչ պաֆոսի մա-
 սին կարող ե մտածել բուրժուական
 դրողը, վո՞րտեղից կարող ե փոխառ
 նել նա այդ պաֆոսը, յեթե կապիտա-
 լիստական յերկրներում բանվորը վըս
 տահ չէ վաղվա նկատմամբ, յեթե նա

չղիտե, թէ վաղը աշխատելու յէ արդ
յոք, յեթէ գյուղացին չղիտե, թէ
վաղն աշխատելու յէ արդյոք իր մի
բուռն հողի վրա, թէ իր հունից
դուրս և չպրտելու նրան կապիտա-
լիստական ճղնաժամը, յեթէ աշխա-
տավոր ինտելիգենցիան այսոր աշխա-
տանք չունի և չղիտե, թէ ստանալու
յէ արդյոք վաղը :

Ինչի՞ մասին կարող ե գրել, ի՞նչ
պաֆոսի մասին կարող ե խոսել բուր
ժուական գրողը, յեթէ աշխարհն այ
սոր կամ վաղը նորից պիտի նետիի
խմաղերիալիտատական նոր պատերազ-
մի խորխորատը :

Բուրժուական գրականությունը ներ
կայում գտնվում ե այնպիսի վի-
ճակում, վոր նա չի կարող այլևս
մեծ յերկեր ստեղծել: Բուրժուական
գրականության անկումն ու քայլա-
յումը, վոր առաջ ե գալիս կապիտա-
լիստական իրավակարգի անկումից,
նեխումից, ներկայացնում ե բարձու-
թկան կուլտուրայի և բուրժուական
գրականության բնորոշ գիծը, բնորոշ
առանձնահատկությունը ներկայումն:
Անդարձորեն անցել են այն ժամանակ
ներու, յերս բուրժուական գրականու-

թյունն արտացոլելով բուրժուական
իրավակարգի հաղթանակները փեռուա
լիզմի գեմ, կարողանում եր ստեղծել
կապիտալիզմի ծաղկման շրջանի մեծ
յերկերը: Այժմ տեղի յէ ունենում
թեմաների, տաղանդների, հեղինակ-
ների և հերոսների համատարած ման
րացումը:

Ֆաշիզմը, մահացու յերկյուղով
բռնված պրոլետարական հեղափոխու
թյան հանգեց ջարդ ու վշուր և ա-
նում քաղաքականությունը, յետ վե-
րապարձնելով մարդկանց դեպի մարդ-
կային պատմության ամենաղժնողակ
ու վայրադ շրջանները, խարույկների
վրա ալլուրով և բարբարոսարար վոչն
չացնելով մարդկության լավագույն
զավակների ստեղծագործություննե-
րը:

Բուրժուական կուլտուրայի անկ-
ման ու նեխում համար բնորոշ են
միստիցիզմի, կղերականության սան-
ձարձակությունները և պունոգրա-
Փիայով տարվելը:

Բուրժուական գրականության, այն
գրականության համար, վորն իր
գրելը վաճառել ե կապիտալին, «ան
վանի մարդիկ» են հանդիսանում

այժմ գողերը, - պոռնիկները և խու-
 լիգանները : Այդ բոլորը ընորոշ ե
 գրականության այն մասի համար,
 վորը փորձում է թագնել բուրժուա-
 կան իրավակարգի նեխումը, ապարդ
 յուն կերպով փորձում ե ապացու-
 ցել, թե վոչինչ չի պատահել, թե
 սմբեն ինչ բարեհաջող ե «Դանիայի
 թագավորության մեջ», թե դեռ վոչ
 ինչ չի նեխվում կապիտալիզմի յերկ-
 րում : Բուրժուական գրականության
 այն նոր ներկայացուցիչները, վորոնք
 ավելի սուր կերպով են զգում իրերի
 դրությունը, համակված են հոսե-
 տեսությամբ ու անվաստահությամբ:
 Վաղվա նկատմամբ, գովաբանում են
 սել գիշերը, յերգում են հոռետեսու-
 թյունը, վորպես արվեստի տեսու-
 թյունն ու պրակտիկան : Նրանց
 միայն փոքր մասը, ամենաաղիվ,
 հեռատես գրողները, փորձում են
 յելք գտնել այլ ճանապարհով, այլ
 ուղղությամբ, կապել իրենց ճակա-
 տագիրը պրոլետարիատի հետ, նրա
 հեղափոխական պայքարի հետ : Կա-
 պիտալիստական յերկրների պրոլետա-
 րիատն արդեն կոփում է իր գրակա-
 նագետների, իր գեղարվեստագետնե-

րի՝ հեղափոխական այն գրողների
 բանակը, վորոնց ներկայացուցիչնե-
 րին մենք ուրախ ենք այսոր վողջու-
 նելու խորհրդային գրողների առա-
 ջին համագումարում : Կապիտալիս-
 տական յերկրներում դեռ մեծ չե-
 նեղափոխական գրողների ջոկատը,
 սակայն նա մեծանում ե և մեծանա-
 լու յէ որեցոր՝ դասակարգային պայ
 քարի սրմանը և համաշխարհային
 պրոլետարական հեղափոխության ու
 ժերի ալելացմանը զուգընթաց :

Մենք հաստատապես հավատում
 ենք, վոր ոտարյերկրյա այն մի քանի
 տասնյակ ընկերները, վորոնք ներկա
 յին այստեղ, կիանդիսանան պրոլե-
 տարական գրողների այն եզրը բանա
 կի կորիզը, սպամը, վոր կստեղծի
 համաշխարհային պրոլետարական հե-
 կափոխությունն արտասհմանից ան
 յերկրներում : (Ծափեր) :

Այդպես և գործը կապիտալիստա-
 կան յերկրներում : Մեր խորհրդային
 գրողն իր գեղարվեստական ստեղ-
 ծագործությունների համար նյութ ե
 քաղում, թեմատիկա, պատկերներ,
 գեղարվեստական խոսք և հավաքում
 Դնեսլուստրոյի ու Մագնիստրոյի

մարդկանց կյանքից ու փորձից : Մեր գրողն իր նյութը քաղում է Զելյուս կիւյանների հերոսական եպոպեայից , մեր կուտանտօռթյունների փորձից , մեր յերկրի բոլոր անկյուններում յետացող ստեղծաբար գործունեյությունից :

Մեր յերկրում գրական ստեղծագործության գլխավոր հերոսները , - զրանք նոր կյանքի ակախվ կառուցողներն են՝ բանվորներն ու բանվորուհիները , կոլտանտեսականներն ու կոլտանտեսուհիները , կուսակցականները , տնտեսայարները , ինժեներներները , կոմյերիտականներն ու պլիտներները : Աչա մեր խորհրդային գրականության հիմնական տիպերը , հիմնական հերոսները : Մեր գրականությունը հագեցված է խանդավառությամբ ու հերոսապատճեմով : Նա լավատեսե , ընդ վորում լավատես ե վոչ թե ինչ վոր «ներքին» կենդանական զգացողությամբ : Նա լավատես ե ըստ երության , վորովհետև հանդիսանում ե բարձրացող գասակարգի՝ պրոլետարիատի , միյակ պրոդեսիվ , առաջար գասակարգի գրականությունը : Մեր խորհրդային գրականու

թյունն ուժեղ ե նրանով , վոր ծառայում ե նոր գործին՝ սոցիալիստական շնորհարության :

Ընկ . Ստալինը մեր գրողներին անվանեց «Մարդկային հոդիների ինժեներներ» : Ի՞նչ ե նշանակում այդ : Ի՞նչ պարտականություններ ե դնում այդ կոչումը ձեզ վրա :

Նախ և առաջ այդ նշանակում ե գիտենալ կյանքը , վորպեսդի կարողանալ վերջնին ճիշտ պատկերել գեղարվեստական ստեղծագործություններում , պատկերելով վոչ թե սիոլաստիկ , մեռած կերպով , վոչ վրապես «որբեկտիվ իրականությունը» այլ պատկերել իրականությունը նրա հեղափոխական զարդարանուն մեջ :

Ընդմին գեղարվեստական պատկերման ճշմարտությունը , պատմական կոնկրետությունը պետք ե դուդակցվի աշխատավոր մարդկանց սոցիալիզմի վորով գաղափարական վերափոխման յենթարկելու և դաստիարակելու խնդրի հետ : Գեղարվեստական գրականության , գրական քննադասության այդ մեթոդն է , վոր



մենք անվանում ենք սոցիալիստական
ռեալիզմի մեթոդ։

Մեր խորհրդային գրականությունը
չի վախճանում տենդենցիոնության
մեջ մեղադրվելուց։ Այս, խորհրդա-
յին գրականությունը տենդենցիոն է։
Դասակարգային պայքարի եպոխա-
յում չկա և չի կարող լինել վոչ դար
սակարգային, վոչ տենդենցիոն, իբրև
թե ապաքաղաքական գրականու-
թյուն (ծափեր)։ Յես կարծում եմ,
վոր խորհրդային գրականագետներից
ամեն մեկը յուրաքանչյուր բժամիտ
բուրժուային, յուրաքանչյուր Փելիս
տերին, յուրաքանչյուր բուրժուական
գրողին, վոր կիսոսի մեր գրականու-
թյան տենդենցիոնության մասին, կա-
րող ե ասել՝ այս, մեր խորհրդային
գրականությունը տենդենցիոն է,
մենք հպարտանում ենք նրա տենդեն-
ցիոնությամբ, վորովհետեւ մեր տեն-
դենցներն են՝ ապատագրելով աշխա-
տավորներին և ամբողջ մարդկությա-
նը կապիտալիստական ստրկության
լծից» (ծափեր)։

Լինել մարդկային հոգիների ինժե-
ներներ, նշանակում ե յերկու վորովհե-
կանգնած լինել ռեալ կյանքի հողի

վրա։ Այդ իր հերթին նշանակում ե
խղումն հին տիպի ոռմանտիղմի,
վորը պատկերում եր գոյություն
չունեցող կյանք, գոյություն չունե-
ցող հերոսներ, տանելով ընթերցողին
կյանքի հակառակություններից ու ճնշո-
մից գեպի անիրական աշխարհը,
գեպի ուսուվանների աշխարհը։ Մեր
գրականության համար, վորը յերկու-
վոտով կանգնած ե մատերիալիստա-
կան ամուր հիմքի վրա, չի կարող
խորթ լինել ռոմանաֆիկան, սակայն
նոր տիպի ռոմանաֆիկան, հեղափոխա-
կան ռոմանատիկան։ Մենք ասում ենք,
վոր սոցիալիստական ռեալիզմը հան-
դիսանաւմ ե խորհրդային գեղարվես-
տական գրականության և գրական
քննադատության հիմնական մեթոդը,
իսկ զա յենթագրում ե, վոր հեղա-
փոխական ռոմանատիկմը պետք ե գրա-
կան ստեղծագործության մեջ մտնի,
վորպես նրա բազկացուցիչ մասը,
քանի վոր մեր կուսակցության ամ-
բողջ կյանքը, բանվոր դասակարգի
ամբողջ կյանքն ու նրա պայքարն,
ամենազնղակ, ամենազաստ գործ-
նական աշխատանքի զուգակցումն ե
մեծագոյն հերոյիկայի և հոյակապ

Հեռանկարների հետ : Մեր կուսակցությունը միշտ ուժեղ է յեղել նրանով, վոր միացրել է և միացնում է խիստ գործարարությունն ու գործնականությունը լայն հեռանկարների հետ, առաջ ընթանալու մշտական ձկտման հետ, կոմունիստական հասարակությունը կառուցելու օրայքարի հետ : Խորիրդային գրականությունը պիտք է կարողանա ցույց տալ մեր հերոսներին, պիտք է կարողանա հայացք զցել մեր վաղվա վրա : Դա ուստափիա չի լինի, վորովինուն մեր Վազր պատրաստվում է արդեն այսոր, պլանաչափ, գիտակից աշխատանքը :

Զի կարելի մարդկային հոդիների ինժեներներ լինել առանց գիտենալու գրական գործի տեխնիկան, ընդ վորում պետք է նկատել, վոր գրական գործի տեխնիկան ունի մի շարք յուրատեսակ առանձնահատկություններ :

Կան շատ տեսակ դեմքեր ձեղ մոտ : Խորհրդային գրականությունը բոլոր հնարավորություններն ունի գործադրելու զենքերի այդ տեսակները (գրական ստեղծագործության ժամաները, վոճերը, ձեվեր ու յեղանակները) նրանց բազմազանության և

լիակատարության, ընտրելով այն բոլոր լավն, ինչ վոր ստեղծել են այդ ասպարիզում նախորդ բոլոր եպոխաները : Այդ տեսակեակից գործի տեխնիկային տիրապետելը բոլոր եպոխաների գրական ժառանգության քննադատորնեն յուրացնելը, ներկայացնում և իրենից մի խնդիր, առանց վորի լուծման, չեք զառնա մարդկային հոգիների ինժեներներ :

Ընկերներ, պրոլետարիատը, ինչպես նյութական ու, հոգեվոր կուլտուրայի ուրիշ բնագավառներում միակ ժառանգն է այն բոլորի, ինչ վոր լավագույնն է համաշխարհային գրականության գանձարանում : Բուրժուական վատնել է գրական ժառանգությունը : Մենք պարտավոր ենք խընամքով հավաքել, ուսումնասիրել այդ ժառանգությունը և քննադատորնեն յուրացնելով վերջինո՞ւ առաջ բնագագար :

«Մարդկային հոգիների» ինժեներները լինել նշանակում է ակտիվ կերպով պայքար մղել լեզվի կուլտուրայի համար, ստեղծագործությունների վորակի համար : Մեր գրականությունը դեռ չի համապատասխանում մեր

և պոխաների պահանջներին։ Մեր դրա
կանության թույլ կողմերն արտացո
լում են գիտակցության հետ մնալը
եկոնոմիկայից, վորից զերծ չեն հար
կավնաև մեր գրականագետները։ Ահա
թե ինչու՝ անդուլ աշխատանք կատարել
իր վրա, իրենց սոցիալիզմի վորով
գաղափարականորեն զինելու համար,
այն անհրաժեշտ պայմանն է, առանց
վորի խորհրդային գրականագետները
չեն կարող վերափոխել իրենց ընթեր
ցողների գիտակցությունը և դրանով
իսկ գառնալ «մարդկային հոգիների
ինժեներներ»։

Մեր հարկավոր և գեղարվեստական
ստեղծագործությունների բարձր վար
սիտություն և այդ տեսակետից ահ-
գնահատելի յե այն ողնությունը, վո-
րը ցույց ե տալիս Ալեքսեյ Մաքսիմո-
վիչ Գորկին կուսակցությանն ո-
պրուետարիատին՝ գրականության վո-
րակի և կուլտուրական լեզվի համար
մղվող պայքարում (ծավեր)։

Այդպես ուրեմն, խորհրդային դրու
ները բոլոր պայմաններն ունեն, ինչ
պես ասում են եպօխային ներդաշնա
կող յերկեր ստեղծագործելու հա-
մար, այնպիսի ստեղծագործություն

ներ, վորոնցից սովորեն ժամանակա
կիցները, վորոնք մինեն ապագա սե-
րունդների հպարտության առարկան։
Խորհրդային գրականության համար
ստեղծված են բոլոր պայմանները,
վոպեսզի նա կարողանա տալ կուլտու-
րապես աճած մասսաների պահանջ-
ներին համապատասխանող ստեղծա-
գործություններ։ Զե վոր միայն մեր
գրականությունը հնարավորություն
ունի այնքան սերտորեն կապված
լինելու ընթերցողների և աշխատավո-
րության ամբողջ կյանքի հետ, ինչ-
ուես տեղի ունի խորհրդային սոցիա-
լիստական հանրապետությունների
մեջ։ Ներկա համագումարն առանձնա
պես ցուցանշական է։ Համագումարը
պատրաստել ե վոչ միայն գրականա
գետները, այլ նրանց հետ միասին
ամբողջ յերկերը։ Այդ նախապատ-
րաստման մեջ ցայտուն կերպով
դրսեվորվեցին այն սերն ու ուշադրու-
թյունը, վորով ըրջապատել են խոր-
հրդային գրողներին կուսակցությու-
նը, բանվորներն ու կոլտնտեսական
գյուղացիությունը այն զգայուն վե-
րաբերմունքն ու վրա հետ միասին
այն պահանջկոտությունը, վորը ցու

ցաբերում են բանվոր դասակարգն ու
կոլտնտեսականները հանդեպ խորհր-
դային գրականագետները : Միայն
մեր յերկրում են գրականությունն ու
գրողն այդպիսի բարձրության հասց-
ված :

Ուրեմն հետազում ձեր համա-
զումարի աշխատանքը խորհրդային
գրողների միության աշխատանքը
կազմակերպեցեք այնպես, վոր դրու-
ների ստեղծագործությունը համա-
պատասխանի սոցիալիզմի ձեռք բե-
րած հաղթանակներին :

Ստեղծեցեք բարձր վարպետու-
թյամբ գաղափարական ու գեղար-
վեստական բարձր բովանդակություն
ունեցող յերկեր : Յեղեք մարդկանց
գիտակցությունը սոցիալիզմի վորով
վերափոխելու գործի ամենաականվ
կազմակերպիչները : Յեղեք անդասա-
կարգ սոցիալիստական հասարակու-
թյան համար մարտնչողների առաջա-
պոր գիրքերում : (Բուռն ծափեր) :

A₂₄ 1986
ՀԿ 39
ԱԿՏ №

Գիր 25 կ.

561
արմ.
1-238ա

Ա. Ա. Ժданով

Советская литература - самая идеальная и
самая передовая литература в мире

ГИЗ ССРА, Эривань. 1935 թ.

APM.

1-238a